

քրքիջով մը: Պարտութիւնը բացարձակ էր: Ու վա՛յ պարտուողին: Կարելի՞ էր դաւոց յանձնել «աս չափիկ» բանն ալ չգիտցողին: Չլլար գիւղապետը, մա՛նաւանդ իր տղան, այդ մարդիկը իսկոյն «կօշիկներս ոտքս կու տային», զիս զրկելու ուրկէ՛ որ եկած էի, տա՛հա շատ հաց ուտելու, որ կը թարգմանուի սորվելու եւ յետոյ գալու: Բայց քաշքշուկը կատարեալ էր: Ինչպէ՞ս կարելի էր մոռնալ նման սուրբի մը անունը, երբ թարգմանուեցաւ, մա՛նաւանդ «փուք» արձակելն ալ, կուռքերուն քթին ու բերնին...

Երկու խոռոզներ էին:

- Ախր, դուք ինչո՞ւ էս մարդոց չէք սորվեցրել մեր պատմութիւնը. իսկի էսպէս կը լինի՞...

Շեշտ, դիմախաղ, յօնքերու կիտում, բարկութիւն:

Ամբոխը դատեց անմիջապէս:

Ողբերգականը հո՛ն էր, որ դիմացի ճամբէն փոշին կը բարձրանար: Զիաւորներու խուլ աղմուկ մը, սալակի պակասովը աւելի մատնիչ: Ոստիկա՞ն: Ժանտարմա՞: Վասֆի՞ն: Ո՛րն ալ ըլլար անոնցմէ, մեր բանը բուրդ էր, սա կարճ յիմարին ու իր ահաւոր մօրուքին անմիջական թելադրանքովը:

- Ուղիղ տկլոր են, չասելու համար անբան: Իսկի ոչինչ չեն իմանում: Ախր, ո՞ւր ենք ի վերջոյ: Զինաստա՞ն թէ Հրնդստան: Ո՞ր ազգին են պատկանում սա թշուառ արարածները:

Արագ-արագ, ներդաշնակ ու քաղցր լեզուով սա հարցումները, հաստատումները, վճիռները ինծի տուին որոշ մտահոգութիւն: Ճամբուն վրայ փոշին կ'ամպանար: Քրտինք՝ բարկ ճակտիս վրայէն: Նշմարեցի՞ն ատիկա գեղացիները:

- Բանը բուրդ է, - ըսաւ մէկը շատ կամաց: Բայց բոլորն ալ լսեցին:

- Ասացէք, խնդրեմ, աղբէր ճան, ասացէք խնդրեմ, էսպէս բան կը լինի՞:

- Վալլահ-պիլլահ, աղբէր ճան: